Ինեսա Գ. Ստեփանյան

«ԹԵՇՔԻԼԱԹԸ-ՄԱՀՍՈՒՍԱ», «ԷՍԷՍ», «ՊԱՆՉԱՍԻԼԱՅԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ[1]

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանություն, Հրեից հոլոքոստ, ինդոնեզական կոմունիստների զանգվածային սպանություն, «Թեշքիլաթը մահուսա», գերմանական «ԷսԷս», «Պանչասիլայի երիտասարդություն», կուսակցական համակարգ, գաղափարախոսություն, մինչցեղասպանական գործունեություն, բանակ:

Հոդվածում փորձ է արվում վերլուծել «Թեշքիլաթը մահուսա», «ԷսԷս» և «Պանչասիլայի երիտասարդություն» կազմակերպությունների գործելակերպը համապատասխանաբար Հայոց ցեղասպանության, Հրեից Հոլոքոսթի և Ինդոնեզիայում 1965-66 թթ. տեղի ունեցած դեպքերի ժամանակ[2]: Ներկայացվում է կազմակերպություններից յուրաքանչյուրի ստեղծման պատմությունը, կառուցվածքը, անդրադարձ է կատարվում դրանց ձևավորման հանգամանքներին և նպատակներին, կառույցների որդեգրած գաղափարախոսությանը, մինչև ցեղասպանություններն ու զանգվածային սպանությունները իրականացրած գործունեությանը: Ապա վերլուծվում են բուն գործողությունները և համեմատության մեջ են դրվում նշված կազմակերպությունների գործադրած մեթոդները:

Հետազոտությունը մատնանշում է նշված կառույցների դերակատարությունը կոտորածների իրականացման գործընթացում: Գաղտնի կառույցների առկայությունն արդեն իսկ փաստում է կանխամտածվածության մասին, բայցևայնպես դրանց համեմատությունը հնարավորություն է տալիս ընդգծել կազմակերպություններից յուրաքանչյուրի ստեղծման հիմնական նպատակը:

***

Պատմության ընթացքում մարդկությունը մշտապես ականատես է եղել պատերազմների, կոտորածների, ցեղասպանություններ, մարդկության դեմ ուղղված այլ հանցագործությունների: Ցեղասպանություններ և զանգվածային սպանություններ ուսումնասիրելիս հնարավոր չէ չանդրադառնալ դրանց իրագործող ուժերին: Մեր նախկին մի հետազոտությունում[3] ներկայացվել են ցեղասպանությունների հիմնական իրագործող-

1 Հոդվածը ստացվել է 26.08.2019 և ընդունվել տպագրության՝ 27.11.2019.

2 Ինդենոզիայում 1965-66 թթ. տեղի ունեցած իրադարձությունների իրավական գնահատականի վերաբերյալ հստակ մոտեցում չկա, թե արդյոք դրանք կարելի է որակել որպես ցեղասպանություն, թե՞ ոչ: Կարծիքները բազմազան են՝ զանգվածային սպանություններից մինչև ցեղասպանություն: Հոդվածում ուսումնասիրությունը կատարվել է ա՛յդ համատեքստում: Մանրամասն տե՛ս *The Specter of Genocide: Mass Murder in Historical Perspective*, eds. Robert Gellately, Ben Kiernan, (Cambridge: Cambridge University Press, 2003); Katharine McGregor, Jess Melvin, Annie Pohlman, *The Indonesian Genocide of 1965: Causes, Dynamics and Legacies,* Palgrave Studies in the History of Genocide (Palgrave, 2018); Saskia Wieringa, Nursyahbani Katjasungkana, *Propaganda and the Genocide in Indonesia: Imagined Evil* (UK: Routledge, 2018); *Dictionary of Genocide: A-L*, Samuel Totten, Paul Robert Bartrop, Steven L. Jacobs (ABC-CLIO, 2008).

3 Ինեսա Ստեփանյան, «Հայոց ցեղասպանության և Հրեից հոլոքոստի հիմնական իրագործողների հարցի շուրջ», *Ցեղասպանագիտական հանդես* 6, թիվ 2 (2018), 69-87:

ները, այդ թվում անդրադարձ է կատարվել երկու գաղտնի կազմակերպություններին՝ «Թեշքիլաթը մահուսա»-ին և «ԷսԷս»-ին:

Մեր օրերում ևս կան նմանատիպ կազմակերպություններ՝ տարբեր ձևաչափերով, որոնք ստեղծվում են այս կամ այն հզոր պետության կամ ուժի կողմից և իրականացնում են ցեղասպանական գործողություններ: Սույն հոդվածում հանգամանորեն վերլուծվում է «Պանչասիլայի երիտասարդություն»[4] կազմակերպության գործունեությունը: Այս կառույցի ընտրությունը բնավ կամայական չէ, քանզի, ի տարբերություն «Թեշքիլաթը մահուսա»-ի և գերմանական «ԷսԷս»-ի, այն գործում է մինչ օրս և որևէ կերպ չի քողարկում իր գոյությունը: Ուստի, հաշվի առնելով այն կարևոր հանգամանքը, որ մերօրյա իրականությունում դեռևս առկա է նմանատիպ կառույցներից բխող վտանգը, կարծում ենք հետազոտությունը հնարավորություն կտա նախկինում գործունեություն ծավալած երկու կազմակերպությունների և դեռևս իր գործունեությունը շարունակող կառույցի ուսումնասիրության օրինակով հասկանալ ներկայում գործող խմբավորումներին առնչվող որոշ խնդիրներ:

Հետազոտությունը, մասնավորապես, անդրադառնում է այն հարցին, թե խնդրո առարկա կառույցներն ի՞նչ էին իրենցից ներկայացնում, ինչպիսի՞ գործունեություն են իրականացրել, և ինչպիսի՞ ընդհանրություններով ու առանձնահատկություններով էր բնութագրվում այդ գործունեությունը:

Կազմակերպությունների ձևավորումը և կառուցվածքը

«Թեշքիլաթը մահուսա». Անհրաժեշտ է նշել, որ Հատուկ կազմակերպության գործունեությանն առնչվող նյութերն ամբողջովին պահպանված չեն[5], քանի որ դրանց գերակշռող մասը ոչնչացվել է գաղտնի կազմակերպության ղեկավարների կողմից՝ մասնավորապես դոկտոր Նազըմի ջանքերով[6] կամ քրեական հետախուզության նախկին պետ Ազիզ բեյի կողմից, ով պաշտոնաթող լինելուց հետո Հատուկ կազմակերպության գործունեությանը վերաբերող փաստաթղթերը չվերադարձրեց[7]:

Գաղտնիք չէ, որ թուրքական ցեղասպան քաղաքականությունն ուղեկցվում էր ժխտողականությամբ և ցեղասպանության ապացույց հանդիսացող փաստաթղթային հիմքի ոչնչացմամբ, ինչի մասին պաշտոնապես արձանագրվել է 1919 թ. Ստամբուլում տեղի ունեցած դատավարության ժամանակ՝ երիտթուրք ղեկավարների դեմ

---

4 Pemuda Pancasila (ինդոնեզերեն Pemuda՝ երիտասարդություն, Pancasila՝ հինգ սկզբունք): Ինդոնեզիայի աջակողմյան կիսառազմական կազմակերպություն, որը ձևավորվել է 1959 թ. գեներալ Աբդուլ Հարիս Նասութիոնի կողմից:

5 Հարցի շուրջ մի շարք հրապարակումներ ունի Մաշտոցի անվ. Մատենադարանի աշխատակից Վերա Սահակյանը, որոնցից մենք օգտվել ենք հոդվածի այս հատվածը շարադրելու ընթացքում:

6 *Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի*, կազմ.՝ Ավետիս Փափազյան, խմբ.՝ Ռուբեն Սահակյան (Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1988), 18: Մելինե Անումյան, *Ճանաչում և դատապարտում. Երիտթուրքերի դատավարությունները (1919-1921 թթ. և 1926 թ.)* (Երևան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2013), 23:

7 Ջոն Կիրակոսյան, *Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ*, գիրք երկրորդ (Երևան, «Հայաստան» հրատ., 1983), 175:

մեղադրանքում: Մասնավորապես, պատերազմի նախարարությանը պատկանող փաստաթղթերի ոչնչացման մասին 1919 թ. հունիսի 3-ի նիստի ժամանակ փաստեց Օսմանյան կայսրության հեռագրային կապի նախկին նախարար Հուսեյն Հասիմը[8]: Այս առիթով նույն թվականի օգոստոսի 4-ին դատարանում տված իր վկայության մեջ նշել է նաև փոստային և հեռագրային ընկերության ղեկավար Օսման Նուրի Էֆենդին. «Ես այրել եմ որոշ թղթեր ինձ տրված հրամանի համաձայն...»[9]: Այսպիսով, թուրքական իշխանությունների ջանքերով Թեշքիլաթը-ի մասին տեղեկատվությունը խիստ սահմանափակ է:

Կառույցի ստեղծման տարեթվի, դրա ղեկավարների, գործունեության ուղղությունների և նպատակների շուրջ տարածված տեսակետները տարբեր աղբյուրներում տարակարծիք են[10]: Հիմք ընդունելով հիմնականում թուրքական աղբյուրները՝ Թեշքիլաթը-ի տարբեր ստորաբաժանումների ղեկավարների վկայությունները՝ պատմաբանների մի մասը կարծում է, որ «Թեշքիլաթը մահսուսա»-ն ստեղծվել է Բալկանյան պատերազմի ընթացքում կամ դրանից հետո՝ Առաջին համաշխարհային պատերազմի նախաշեմին[11]: Այդ մասին փաստում է կառույցի ղեկավարներից Հյուսամեթթին Էրթյուրքը. «Թեշքիլաթ-ը մահսուսան ստեղծվել է Առաջին համաշխարհային պատերազմից առաջ՝ հեղափոխության հերոս, ռազմական նախարար, իսկ հետագայում գլխավոր հրամանատար՝ Էնվեր Փաշայի կողմից»[12]:

Հետազոտողներից ոմանք կարծում են, որ հատուկ կազմակերպությունն առաջացել է ավելի վաղ: Օրինակ Ֆիլիպ Սթոդդարդը, ով, կարելի է ասել, Հատուկ կազմակերպության մասին ամենածավալուն ուսումնասիրության հեղինակն է, կարծում է, որ կառույցը ձևավորվել է 1903-1907 թթ. ընթացքում, իսկ 1913 թ. այն անվանվել է Հատուկ կազմակերպություն[13]: Հավանաբար, Սթոդդարդն այս տարեթիվը կապում է «ֆիդայիների կազմակերպության» ձևավորման հետ: Նույն կարծիքն է կիսում նաև պատմաբան Սուաթ Փարլարը, ով, սակայն, նշում է, որ «ֆիդայիների կազմակերպությունը» ստեղծվել է 1906 թ. Իթթիհադի սալոնիկյան կենտրոնի հետ միաժամանակ, այնուհետև 1911-1912 թթ. Բալկանյան պատերազմների ժամանակ փոխակերպվել է «Թեշքիլաթը մահսուսա»-ի[14]:

Հայր Գրիգոր Գերգերյանն իր անձնական արխիվային նյութերում «Թեշքիլաթը մահսուսա»-ի ստեղծման տարեթիվը նշում է 1913 թ. (հունվարի 24), երբ Էնվեր

---

8 Taner Akçam, *The Young Turks' Crime Against Humanity: The Armenian Genocide and Ethnic Cleansing in the Ottoman Empire* (Princeton and Oxford: Princeton University Press, 2012), 16.

9 Նույն տեղում, 17:

10 Տե՛ս Արսեն Ավակյան, *Геноцид армян: механизмы принятия и исполнения решений* (Երևան: ՀԱՀ ՊԱ Музей-институт Геноцида армян, 2013); Lewy Guenter, *The Armenian Massacres in Ottoman Turkey: a Disputed Genocide* (Salt Lake City: The University of Utah Press, 2005); Krikor Guerguerian, *10 Teşkilat-ı Mıhsusa-Armenian I, Special Organization,* Private Materials (Archive 2) (U.S.A.,Clark Digital Commons, 2018) at https://commons.clarku.edu/cgi/viewcontent.cgi?article=1023&context=special_org.

11 Авакян, *Геноцид армян*, 94-95.

12 Նույն տեղում, 95:

13 Guenter, *The Armenian Massacres in Ottoman Turkey,* 73.

14 Նույն տեղում:

փաշան Էշրեֆ Քուշչուբաշին կարգադրում է գնալ Զմյուռնիա և այնտեղ նոր հրոսակախմբեր կազմել՝ պատճառաբանելով. «Զմիւռնիոյ շրջանի Յոյն եւ Հայ եկեղեցիներուն մէջ պահուած են զէնքեր եւ ռազմամթերք: Եկեղեցիները վերածուած են զինարանի եւ բոլոր քահանաները հրոսապետներ են (էշգըյա-չէթէ) եւ հետեւաբար անոնց դէմ սկսելու է մաքրագործումի (թէմիզլէմէ) գործողութիւններ»[15]:

Այսպիսով, հաշվի առնելով, որ կառույցի մասին հիմնական տեղեկատվությունը ստացվել է թուրքական աղբյուրներից, այն էլ մասնակի, ապա կարող ենք ասել, որ նույնիսկ բազմաթիվ ուսումնասիրությունների արդյունքում՝ Հատուկ կազմակերպության ձևավորման ժամանակաշրջանը, թերևս այդպես էլ չհստակեցվի:

Հատուկ կազմակերպությունը պաշտոնականացվել է 1914 թ. օգոստոսի 3-ին Կ.Պոլսի Նուրի Օսմանիե պողոտայում տեղակայված «Թասվիր-ի Էֆքյար» թերթի տպագրատան դիմաց վարձակալած թիվ 32 տանը, որը դարձավ «Թեշքիլաթը մահսուսա»-ի պաշտոնական գրասենյակը[16]:

Տեղեկություններ կան, որ 1915 թ. ապրիլի 5-ին կազմակերպությունն անվանափոխվել է՝ վերանվանվելով «Ումուր-ը շարքիյյէ դաիրեսի» (Արևելյան գործերի գրասենյակ)[17]: Ինչպես մեկնաբանում է Վերա Սահակյանը, կառույցի անվանափոխությունը պայմանավորված էր հայերի բնաջնջման ծրագրի երկրորդ՝ բուն ցեղասպանության փուլի մեկնարկով[18]: Պետք է նշել, որ անվանափոխությունից ընդամենը մի քանի օր անց արդեն ձեռնարկվեցին առաջին գործնական քայլերը՝ Կ.Պոլսի հայ մտավորականության ձերբակալություններն ու սպանությունները[19]:

Կազմակերպության հիմնադրի և ղեկավար անձանց վերաբերյալ կարծիքները ևս տարբեր են: Ըստ թուրքական ռազմական արխիվում (ATASE – գլխավոր շտաբի ռազմական պատմության և ստրատեգիական հետազոտությունների վարչության տնօրինության արխիվ) առկա փաստաթղթերի, որոնցում կառույցի նախագահների տվյալները նշված են ըստ ժամանակագրության, Հատուկ կազմակերպության առաջին ղեկավարն է եղել Սուլեյման Ասքերի բեյը (1913 թ. նոյեմբերի 30 – 1914 թ. նոյեմբերի 6 կամ 13)[20]: Պատմաբան Ջեմալ Քութայը Թեշքիլաթը-ի առաջին նախագահ է համարում Էշրեֆ Քուշչուբաշին, սակայն ի հակադրություն Քութայի կարծիքի, Ֆիլիպ Սթոդդարդը նշում է, որ Էշրեֆ բեյը պատասխանատու է եղել միայն Արաբիայի, Սինայի

---

15 Guerguerian, *10 Teşkilat-ı Mhsusa-Armenian I, Special Organization*, 1.

16 Maria Jacobsen, "Diaries of a Danish Missionary, Harpoot, 1907–1919," in *Armenian Genocide Documentation Series 5* (Princeton and London: Gomidas Institute, 2001) 75.

17 Վերա Սահակյան, ««Թեշքիլաթ-ը մախսուսա» գաղտնի կազմակերպությունը՝ Հայոց ցեղասպանության ոճրագործ», *Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագիր* Ա (2017), 191:

18 Նույն տեղում, 194:

19 Մաշտոցի Մատենադարան, Տիրայր Հովհաննես վրդ. արխիվ (1891-1939 թթ.), ցուցակ 47, թղթ. 131, վավ. 21:

20 Ayşe Hür, "Was wissen wir wirklich über die Teşkilat-I Mahsusa?" *ADK Armenisch-Deutsche Korrespondenz* 162, Heft 1 (2014): 40-41.

թերակղզու և Հյուսիսային Աֆրիկայի մասնաճյուղերի համար[21]: Կառույցի անվանափոխությունից հետո երկրորդ նախագահ է նշանակվել նախկին «Արևելյան պետություն» (Şura-yi Devlet) կազմակերպության անդամներից Ալի Բաշհամրան[22]: Իսկ վերջին նախագահը եղել է Հյուսամեթթին Էրթյուրքը, որի կառավարման ժամանակ էլ՝ 1918 թ. դեկտեմբերի 5-ին կազմակերպությունը ինքնալուծարվել է[23]:

Հատուկ կազմակերպության նպատակների և գործառույթների վերաբերյալ կարծիքները ևս տարբեր ու հակասական են: Վահագն Դադրյանը Հատուկ կազմակերպությունը բնութագրում է հետևյալ կերպ. «Կիսանկախ պետություն պետության ներսում»[24]: Սկզբնական շրջանում, ինչպես ներկայացվում էր հենց կառույցի կողմից, Հատուկ կազմակերպության ձևավորումը միտված էր «ազգային իդեալներին և նպատակներին, որոնց իրականացման երաշխիքը պետք է լինի համերաշխությունը և համախմբումը, իսկ դրանց հասնելու համար անհրաժեշտ է Հատուկ կազմակերպություն»[25]: Հատուկ կազմակերպության հիմնական պարտականությունները ներառում էին հետախուզություն, հակահետախուզություն և դավադրությունների կանխարգելում[26]: Մինչդեռ, ըստ Դադրյանի, կառույցի անդամների հիմնական առաջադրանքն էր՝ տեղակայվել Թուրքիայի տարածքի առանձին հատվածներում, հարձակվել տեղահանված հայերի խմբերի վրա և ոչնչացնել նրանց[27]:

Ֆիլիպ Սթոդդարդը, որի հետազոտության համար առաջնային սկզբնաղբյուր է հանդիսացել Էշրեֆ Քուշչուբաշի հուշերը, առավել հակված է այն տեսակետին, որ Հատուկ կազմակերպության զորամիավորումները կենտրոնացված են եղել արտաքին ուժերի դեմ: Օրինակ, Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում այն օգտագործվել է Կովկասում, Եգիպտոսում և Միջագետքում հատուկ ռազմական գործողություններ իրականացնելու համար: Ըստ հետազոտողի՝ կազմակերպությունն օգտագործվել է նաև արտաքին թշնամու «դիվերսիոն գործողությունները» և «հնարավոր համագործակցությունը» կանխելու դեմ, հատկապես Սիրիայում և Լիբանանում տեղական ազգայնական շարժման դեմ: Սթոդդարդն այն անվանում է՝ «արաբական անջատողականության և արևմտյան իմպերիալիզմի հետ գործակցության կանխարգելման նշանակալի միասնական մեքենա»: Նրա պնդմամբ, հայերի տեղահանություններին Հատուկ կազմակերպությունը մասնակցություն չի ունեցել[28]:

Մի շարք ժամանակակից հեղինակներ քննարկում և ուսումնասիրում են գաղտնի կազմակերպության գործունեությանը վերաբերող տարբեր տեսակետներ, սակայն

---

21 Նույն տեղում:

22 Սահակյան, «Թեշքիլաթ-ը մախսուսա», 191:

23 Նույն տեղում: Տե՛ս նաև Hür, “Was wissen wir wirklich über die Teşkilat-I Mahsusa?” 40-41:

24 Ваакн Дадрян, *История армянского геноцида: этнический конфликт от Балкан до Анатолии и Кавказа* (Ереван, «Ноян-Тапан», 2007), 304.

25 Նույն տեղում:

26 Նույն տեղում, 305:

27 Նույն տեղում, 304:

28 Guenter, *The Armenian Massacres,* 73:

փաստաթղթերի սակավության պատճառով հետազոտություններն այնուամենայնիվ լիարժեք չեն: Փաստը մնում է այն, որ «Թեշքիլաթը մահսուսա»-ն դարձավ հայերի բնաջնջման իրականացման գործիք: Ինչպես արդեն նշել ենք, դեռևս համիդյան ջարդերի ժամանակ գործի էին դրվել նմանատիպ ուժեր՝ «համիդիե»[29] խմբերը, իսկ ավելի ուշ՝ Ադանայի կոտորածների ընթացքում «ֆիդայիների կազմակերպությունը»[30]: Թերևս այդպիսի խմբերի արդյունավետությունը պատճառ հանդիսացավ հետագայում՝ հայ ժողովրդի ավելի ծավալուն կոտորած իրականացնելու նպատակով Հատուկ կազմակերպության ստեղծման համար: Իր առջև ունենալով հայերի հարցը վերջնականապես լուծելու կարևոր խնդիր՝ կազմակերպությունը կարողացավ կարճ ժամանակում համալրվել, ամրանալ և ցանկացած միջոցներով ի կատար ածել իթթիհատականների բաղձալի երազանքը: «Թեշքիլաթը մահսուսա»-ն արդարացրեց կառույցից ակնկալվող հույսերը՝ իրականացրեց հայերի բնաջնջման ծրագիրը:

Գերմանական «ԷսԷս». Ինչպես Հայոց ցեղասպանության, այնպես էլ Հրեից հոլոքոստի պարագայում ցեղասպանության ծրագրի գործադրումը՝ հրեաների հայտնաբերումը, տեղափոխումը և սպանությունը վստահված էր գաղտնի կազմակերպությանը: Այս դեպքում դա «ԷսԷս»-ի տարբեր ստորաբաժանումներն էին:

«ԷսԷս»-ի պահնորդական ջոկատները ձևավորվեցին 1923 թ.: Սրանք սկզբում փոքրաքանակ խմբեր էին, որոնք ներառված էին գրոհային ջոկատների (ՍԱ) կազմում և պատասխանատու էին ֆյուրերի անձնական անվտանգության համար[31]: «ԷսԷս»-ի կազմավորման առիթով Հիտլերն ասել է. «Ինձ անհրաժեշտ է այնպիսի անձնական անվտանգություն, որ թեկուզև փոքրաքանակ լինի, սակայն անմնացորդ նվիրված լինի ինձ: Որպեսզի անվտանգության աշխատակիցները անհրաժեշտության դեպքում նույնիսկ իրենց եղբայրներին դեմ գնան»[32]:

Ինչ վերաբերում է ՍԱ-ին, այն ստեղծվել էր 1922 թ. ֆաշիստական կուսակցության անդամներից և Առաջին համաշխարհային պատերազմի մասնակիցների շարքերից: Դրանց նպատակը կուսակցական միջոցառումների, հավաքների, ելույթների ժամանակ կարգուկանոնի պահպանումն էր, ինչպես նաև քաղաքական թշնամիների դեմ պայքարը: Մինչև 1934 թ. ՍԱ-ն առաջատար դիրքերում էր և նրա ղեկավար Էռնստ Ռյոմը հավակնում էր գրոհային ջոկատները ներգրավել ներքին զորքերում և դրանով իսկ ամրացնել իր դիրքերը՝ դառնալով կուսակցության ղեկավար[33]:

---

29 Hamidiye Asiret Suvari Alaylari (համիդյան ցեղային հեծելազորի զորագնդեր)՝ Աբդուլ Համիդի անունով, որոնք հիմնականում քրդերով համալրված ռազմական ստորաբաժանումներ էին: Գաղափարի հեղինակը Շաքիր փաշան էր: Մանրամասն տե՛ս՝ Սուրեն Մանուկյան, «Հանցակցությունը որպես համախմբող գործոն. Օսմանյան կայսրությունում 1894-96 թթ. հայերի կոտորածներին քրդերի ներգրավման պատճառների հարցի շուրջ», *Ցեղասպանագիտական հանդես* 6, թիվ 2 (2018), 29:

30 Որոշ տվյալներով ստեղծվել է 1906 թ. Իթթիհադի սալոնիկյան կենտրոնի հետ միաժամանակ:

31 *Войска СС фашистской Германии* (Для служебного пользования), Материал подобран, обработан и подготовлен к печати майором Ежовым П. В. (Москва: Главное Разведывательное Управление Красной Армии, 1944), 5:

32 Хене Хайнц, *Черный орден СС. История охранных отрядов* (Москва: «Олма-Пресс», 2003), 22.

33 Նույն տեղում:

Այլ տվյալներով «ԷսԷս»-ը ստեղծվել է 1925 թ., երբ Հիտլերի հրամանով Յուլիուս Շրեքը, ով ֆյուրերի անձնական վարորդն էր և միևնույն ժամանակ ապահովում էր նրա անվտանգությունը՝ ՍԱ-ի անդամներից ստեղծեց մի ջոկատ, որը ստացավ «Պահնորդական ջոկատ» անվանումը[34]:

Էսէսականները տարբերվում էին ուժային կառույցների այլ ներկայացուցիչներից թե՛ իրենց արտաքինով, թե՛ իրենց հանդեպ հատուկ վերաբերմունքով: Նրանք կրում էին սև համազգեստ, գլխարկներին պատկերված էին գանգեր՝ «մեռած գլուխներ», նրանց խորհրդանիշը երկակի նացիստական ողջույնն էր («зиг» – «հաղթանակ»)[35]: Էսէսականները շրջում էին կանաչ գույնի մոտոցիկլետներով, ինչի համար նրանց երբեմն անվանում էին «կանաչներ», ինչպես օրինակ իր օրագրում նշում է Աննա Ֆրանկը. «Ամեն երեկո փողոցներով կանաչ ու գորշ զինվորական մեքենաներ են գնում-գալիս: «Կանաչները», այսինքն՝ էսէսականները և «սևերը» – հոլանդական ֆաշիստական ոստիկանները, ամենուրեք հրեաներ են փնտրում...»[36]:

Մինչև 1940 թ. «ԷսԷս»-ը համալրվում էր բացառապես կամավորական հիմունքներով, իսկ այդուհետ՝ «ԷսԷս»-ի զորքերի ձևավորումից հետո, սկսեց ավելանալ հավաքագրված անդամների թիվը՝ հասնելով «ԷսԷս»-ի ընդհանուր կազմի մեկ երրորդին[37]:

«ԷսԷս»-ի մարտիկներն ընտրյալներ էին և ծառայում էին արտոնյալ պայմաններում: Էսէսականներ պատրաստելու համար գործում էին հատուկ ուսումնական հաստատություններ (օրինակ՝ Դախաուի, Վեվելսբուրգի և այլն), որոնք ոչ միայն ֆիզիկական պատրաստության էին բերում էսէսականներին, այլ նրանց դաստիարակում էին ֆաշիստական գաղափարախոսությամբ, որի հիմքում Հիտլերի «Իմ պայքարը» գիրքն էր, ֆաշիստական կուսակցության ծրագրերը և ֆաշիստների ռասայական տեսության ուսումնասիրությունները[38]:

Պահնորդական ջոկատները մեծ ճանաչում են ձեռք բերում 1929 թ., երբ Հիտլերն «ԷսԷս»-ի ղեկավար (ռայխսֆյուրեր) է նշանակում Հայնրիխ Հիմլերին: Այդ ժամանակ «ԷսԷս»-ի անդամների թիվը կազմում էր ընդամենը 280, իսկ 1933 թ. արդեն 52.000 հոգի[39]: Ընդհանուր առմամբ, այս երկու նացիստական կազմակերպությունները հատկապես բարգավաճեցին 1930-ականների սկզբներին: Նրանց շարքերը համալրեցին առաջին հերթին պատերազմի վետերանները և նախկինում այլ իրավապաշտպան կազմակերպությունների անդամները[40]:

---

34 Նույն տեղում:

35 Նույն տեղում, 1:

36 *Աննա Ֆրանկի օրագիրը*, ռուսերենից թարգմանեց Հ. Դանիելյանը (Երևան, «Հայպետհրատ», 1962), 70:

37 СС в действии, 15.

38 Նույն տեղում, 14:

39 Նույն տեղում:

40 Herbert Pieper, "The SS Cavalry Brigade and its operations in the Soviet Union, 1941-1942" (Submitted for the Degree of Doctor of Philosophy, Department of History, University of Sheffield, October 2012), https://bit.ly/2Vi4RCn, դիտվել է 10.09.2018:

«ԷսԷս»-ը հայտնի էր նաև «Ընդհանուր ԷսԷս» (*Allgemeine SS*) անվանմամբ: Այն բաղկացած էր մի քանի գլխավոր վարչական գրասենյակներից: Ընդարձակվելով ամբողջ երկրով՝ «ԷսԷս»-ը բաժանվել էր հիմնական մասնաճյուղերի՝ առաջացնելով, այսպես կոչված *վերին բաժանմունքներ (Oberabschnitte)* կամ ռազմական շրջաններ: Դրանց հաջորդում էին *բաժանմունքները (Abschnitte)* կամ շրջանները: Յուրաքանչյուր *վերին բաժանմունք (Oberabschnitte)* ներառում էր մոտ երեք *ստորաբաժանում (Abschnitte)*[41]:

«ԷսԷս»-ն իր առաջին կարևոր դերակատարությունն ունեցավ 1934 թ.՝ ՍԱ-ի ղեկավար Էռնստ Ռյոմի դեմ ուղղված «Երկար դանակների գիշեր» կամ «Ռյոմի մաքրում»[42] գործողության ժամանակ, ինչի համար պարգևատրվեց Հիտլերի կողմից և նացիստական կուսակցության համակարգում բարձրացվեց անկախ կազմակերպության աստիճանի: Սա նպաստեց պահնորդական ջոկատների ինտեգրմանը ֆաշիստական Գերմանիայի պետական համակարգ և հատկապես ռազմական ուժերի շարքեր:

1934 թ. գաղտնի քաղաքական ոստիկանության (Գեստապո) ղեկավար Հերման Գյորինգը Հայնրիխ Հիմլերին է փոխանցում գեստապոյի ղեկավարությունը: 1936 թ. հուլիսի 17-ին «ԷսԷս»-ի ղեկավար Հիմլերը նշանակվում է գերմանական ոստիկանության պետ[43]: Դրանով Հիմլերի ենթակայությանն էին անցնում կանոնավոր ոստիկանության և անվտանգության ոստիկանության զորքերը: Նշանակումից ընդամենը մի քանի օր անց՝ հուլիսի 26-ին Հիմլերն ընդունում է մի որոշում, որով քրեական ոստիկանությունը «Կրիպո» (Kriminalpolizei) և գաղտնի քաղաքական ոստիկանությունը «Գեստապոն» (Geheime Staatspolizei) ներառվում են անվտանգության ոստիկանության կազմում: Այնուհետև անվտանգության ոստիկանությունը միավորվում է անվտանգության ծառայության «ՍԴ» (Sicherheitsdienst) հետ[44]: Ուժերի այս միավորումը հաստատվեց 1939 թ. սեպտեմբերի 27-ին մեկ ընդհանուր «Անվտանգության գլխավոր կայսերական վարչություն» (RSHA) համակարգում[45]: Կառույցի ղեկավարը Ռայնհարդ Հայդրիխն էր, որին, երբ նա սպանվեց, փոխարինեց Կալտենբրունները[46]:

Դեռևս 1938 թ. «ԷսԷս»-ին հաջողվել էր իր ազդեցության տակ առնել ողջ ոստիկանական համակարգը: Իսկ վերջնարդյունքը եղավ այն, որ մի շարք օրենքների հիման վրա (Գերմանական ոստիկանության միավորման մասին, Պահնորդական ջոկատների և ոստիկանության պետական ղեկավարությունը «ԷսԷս»-ի ձեռքում կենտրոնացնելու մասին և այլն) կայսերական ոստիկանությունը վերածվեց ԷսԷս-ի մասնաճյուղի[47]:

---

41 Նույն տեղում:

42 Հայտնի է «Երկար դանակների գիշեր» կամ Ռյոմի պուտչ (հեղափոխություն) անվանմամբ: Գործողությունը ծածկագրված էր «Կոլիբրի»: Տեղի է ունեցել 1934 թ. հունիսի 30-ին: Կազմակերպվել է Հիտլերի և նրա կողմնակիցների կողմից՝ ՍԱ-ի ղեկավար Էռնստ Ռյոմի և ՍԱ-ի գրոհայինների դեմ:

43 СС в действии, 9:

44 Նույն տեղում:

45 Նույն տեղում:

46 Տիգրան Մաթոսյան, *Հայոց ցեղասպանություն և Հրեական հոլոքոստ. համեմատման փորձ* (Երևան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2005), 102:

47 Войска СС, 6:

1939 թ. պահնորդական ջոկատների կազմում կար 200.000[48] ծառայող, որոնք ընդգրկված էին 19 հիմնական բաժանմունքներում և բաժանված էին 114 վաշտերի, այդ թվում 19 հեծելազորային: Պահնորդական ջոկատների կազմում գտնվում էին նաև 14 հաղորդակցման (կապի) միավորումներ, 34 սանիտարական, 36 ավտոտրանսպորտային միջոցներ և 9 տեխնիկական ստորաբաժանումներ[49]: Այս 114 վաշտերից ամենակարևորը 8-ն էին, որոնք ընդգրկված էին հատուկ նշանակության պահնորդական ջոկատների կազմում[50]:

Հրեաների ոչնչացման գործում մեծ էր նաև 1938 թ. ստեղծված «ԷսԷս»-ի ռազմականացված ջոկատների» կամ «Վաֆֆեն-ԷսԷս-ի» դերը, որում ներգրավվում էին պարտադիր զինվորական ծառայության փոխարեն չորս տարվա կամավորական ծառայության անցած անձիք: Ինչպես «ԷսԷս»-ի զորքերի մասին արտահայտվել է նացիստ առաջնորդներից մեկը՝ Ռուդոլֆ Հեսը. «ԷսԷս»-ի զորքերն... ավելի, քան մյուս զինված ստորաբաժանումները հարմար են օկուպացված արևելյան տարածքներում մեր առջև ծառացած այդ հատուկ առաջադրանքների կատարման համար՝ շնորհիվ, ռասայի և ազգության հարցերում նրանց՝ նացիոնալ-սոցիալիստական ոգով պատրաստվածությանը»[51]:

Այս զորքերը բաժանված էին ստորաբաժանումների, որոնք ռազմական իրավիճակում պետք է գործեին բանակի հետ միասին: Այս ջոկատները հետագայում հիմք հանդիսացան 1939-1940 թթ. զորակոչի ժամանակ առաջին մոտորիզացված դիվիզիայի ստեղծման համար: Այլ խոսքերով, սրանք «ԷսԷս»-ի զորքերն էին, որոնք ձևավորվեցին ֆաշիստական կուսակցության երկու հիմնական ռազմական կազմակերպությունների՝ գրոհային ջոկատների (ՍԱ) և պահնորդական ջոկատների (ԷսԷս) հիման վրա: Նրանց կազմում կար 100.000 հոգի, այդ թվում 56.000-ը «ԷսԷս»-ի ռազմական ջոկատներից, իսկ մյուսները՝«Ընդհանուր ԷսԷս»-ից և «Մեռած գլուխ» զորամասերից[52]: Պատերազմի ավարտին «ԷսԷս»-ի զորքերում գործում էին 40 գումարտակներ՝ 580.000 անդամներով[53]:

Հաջորդ ստորաբաժանումը՝ համակենտրոնացման ճամբարները վերահսկող «Մեռած գլուխ» («Տոտենկոպֆ», “Totenkopf”)[54] կոչվող ուժերն էին, որոնք 1934 թ. անցան «ԷսԷս»-ի պատասխանատվությանը[55]:

Բացի վերոնշյալ բաժանմունքներից 1941 թ. մայիսին ստեղծվեցին անվտանգության ծառայության ՍԴ հատուկ նշանակության խմբեր, այսպես կոչված «այնզացխմբեր»

48 Նույն տեղում:

49 Նույն տեղում:

50 Նույն տեղում:

51 СС в действии, 18.

52 Войска СС, 7: Տե՛ս նաև СС в действии, 14.

53 СС в действии, 15:

54 Այդ ուժերի հիմնական գործառույթը՝ համակենտրոնացման ճամբարներում հրեաների ոչնչացումն էր:

55 СС в действии, 14.

(Einsatzgruppen)[56]: Քանի որ միայն անվտանգության ոստիկանությունը և անվտանգության ծառայությունը չէին կարող ապահովել այնզացիմբերի անդամների քանակը, ուստի նրանց շարքերը համալրվեցին ոստիկանության բոլոր բաժանմունքների անդամներով, ինչպես նաև «Վաֆֆեն-ԷսԷս»-ի ներկայացուցիչներով: Ընդհանուր առմամբ խմբերի անձնակազմը հաշվվում էր 3.000 հոգի[57]:

Առհասարակ, դժվար է առանձնացնել «ԷսԷս»-ի մի ստորաբաժանում, որ չի մասնակցել հակահրեական գործողությունների: Այդ բոլոր ստորաբաժանումների գործողությունները վերահսկում էր «ԷսԷս»-ի կենտրոնական մարմինը: Կառույցի բոլոր ստորաբաժանումների առջև դրված էր մեկ նպատակ՝ ազգության և ռասայի մաքրության, Եվրոպան Գերմանիայի վերածելու խնդիրը[58]: Եվ հենց դրանով էր պայմանավորված ԷսԷս-ի ընտրությունը՝ «հրեական հարցի լուծման համար», քանզի, ինչպես նշում է Հեսսը. «ԷսԷս»-ի զորքերը մեծածավալ պատրաստվածություն ունեին ռասայի և ազգության հարցերում»[59]:

Նյուրնբերգյան դատավարությունների ժամանակ հանցավոր կազմակերպությունների վերաբերյալ լսվել են 22 ներկայացուցիչների վկայություններ[60]: Հարցաքննությունների արդյունքում ԷսԷս-ին առաջադրվեցին այնպիսի մեղադրանքներ, ինչպիսիք են՝ հրեաների հետապնդում և ոչնչացում, համակենտրոնացման ճամբարներում դաժանությունների և սպանությունների իրականացում, գրավված տարածքներում անմարդկային դրսևորումներ՝ ռազմագերիների հալածանքներ և սպանություն[61]: «ԷսԷս»-ի հարցի քննարկման ժամանակ տրիբունալը ներառում է բոլոր նրանց, ովքեր պաշտոնապես անդամակցել են «ԷսԷս»-ին, այդ թվում՝ «Ընդհանուր ԷսԷս-ի», ԷսԷս-ի զորքերի, «Մեռած գլուխ» կոչվող զորամիավորումների, ինչպես նաև ոստիկանական բոլոր ուժերի անդամներին, որոնք եղել են «ԷսԷս»-ի կազմում: Բացառություն էին կազմում միայն «ԷսԷս»-ի հեծելազորային միավորումները, քանի որ «ԷսԷս»-ի ռայխսֆյուրերի հարցը քննվում էր գեստապոյի և ՍԴ-ի շրջանակներում[62]:

«ԷսԷս»-ի ստեղծման պատմության, նրա գործունեության հիմնական ուղղությունների, իրականացրած ծրագրերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ կառույցն ի սկզբանե ստեղծվել է ապահովելու Հիտլերի անվտանգությունը և պաշտպանելու նացիստական կուսակցության շահերը: Սակայն, եթե նույնիսկ հրեականության ոչնչացումը չի եղել կազմակերպության ստեղծման պատճառ կամ առաջնային նպատակ, ապա դարձել է դրա հետագա գործունեության հիմնական ուղղությունը: Հակահրեական գործողություններին մասնակից են դարձել «ԷսԷս»-ի գրեթե բոլոր ստորաբա-

---

56 Сергей Чуев, *Спецслужбы третьего рейха*, книга II (Санкт-Петербург: «Нева», 2003), 23.

57 Raul Hilberg, *The Destruction of the the European Jews* (Chicago: Quadrangle Paperbacks, 1961), 189.

58 СС в действии, 18:

59 Նույն տեղում:

60 *Нюрнбергский процесс. Сборник материалов.* Том 2, второе издание, Константин Горшенин (гл. ред.) (Москва: Государственное издательство Юридической литературы, 1954), 946.

61 СС в действии, 19.

62 Նույն տեղում:

ժանումները, որոնց առջև դրված խնդիրները ծառայել են մեկ ընդհանուր նպատակի: Հաշվի առնելով «ԷսԷս»-ի պատասխանատվության և գործունեության ծավալները, կարող ենք ասել, որ նացիստական իշխանությունների՝ հրեաներին ոչնչացնելու ծրագիրը չէր ունենա այն արդյունքը, որն ապահովեց «ԷսԷս»-ի հսկայական համակարգը:

«Պանչասիլայի երիտասարդություն». Այս կազմակերպությունն «Ինդոնեզիայի կոմունիստական կուսակցության» (այսուհետ՝ ԻԿԿ) դեմ հանդես եկած ուժերից մեկն էր, սակայն, ի տարբերություն այլ ուժերի[63] «Պանչասիլայի երիտասարդություն»-ը չուներ կրոնադավանական հիմք և ավելի ազգայնական բնույթ էր կրում:

Կոմունիստական կուսակցությունն Ինդոնեզիայում գործում էր դեռևս 1920-ական թվականներից: Սկզբնական շրջանում կուսակցությունն անցել է մեծ դժվարությունների միջով, սակայն, արդեն 1926-27-ականներին՝ կանգնելով Ինդոնեզիայի ազգային-ազատագրական պայքարի ակունքներում, կարողացել է ամրապնդել իր դիրքերը[64]:

Ինդոնեզիայի կոմունիստները, ի տարբերություն հարևան կոմունիստական ուժերի չէին հակամարտում գործող իշխանությունների հետ, այլ հակառակը, սերտ համագործակցում էին ի նպաստ պետության շահերի: Ինդոնեզիայի անկախացման ժամանակ (1945 թ. օգոստոս)[65] և հետագայում նախագահ Ահմեդ Սուքարնոյի[66] վարած ժողովրդական բարեփոխումների քաղաքականությանը զուգահեռ ընդլայնվում էր նաև ԻԿԿ-ի ազդեցությունը: Դրան զուգահեռ, աճում էր նաև կուսակցության անդամների քանակը՝ 1950-1965 թթ. ընթացքում կոմունիստների թիվը 35.000-ից հասավ մոտ 3 միլիոնի[67]: Այս հանգամանքը մտահոգիչ էր աջակողմյան ուժերի համար և նույնիսկ անհանգստության ալիք բարձրացրեց ազգային բանակի շարքերում: Կոմունիստական կուսակցության դեմ բանակի լարվածությունն ավելի մեծացավ, երբ նախագահ Սուքարնոն սկսեց ակտիվորեն խոչնդոտել անգլիացիների նախագծած Մալայզիայի անկախացման ծրագրին, քանզի ձգտում էր իշխանություն սահմանել նաև Մալայան արշիպելագի այդ հատվածի վրա: Իրադարձությունները զարգացան այնպես, որ շուտով՝ Մալայզիայի՝ Միացյալ Ազգերի Կազմակերպության Անվտանգության խորհրդում ընտրվելուց հետո, Ինդոնեզիան հայտարարեց ՄԱԿ-ից դուրս գալու մասին[68]: Այսպիսով, կանխատեսելով ինդոնեզա-մալայզիական հարաբերությունների զարգացումների ռազմական ընթացքը, ԻԿԿ-ն առաջ է բերում «զինված ազգի» հայեցակարգը: Եվ չնայած բանակի ղեկավարության բողոքի ցույցերին, 1965 թ. հուլիսին,

63 Այդպիսի ուժերից էին «Նահդատուլ Ուլամա», «Մաշումի», «Մուհամադիա» կազմակերպությունները:

64 Б. И. Ильичев, «Коммунистическая партия Индонезии», *Большая Советская Энциклопедия*, https://oval.ru/enc/35567.html, դիտվել է 05.06.2019.

65 Նույն տեղում:

66 Ինդոնեզիայի առաջին նախագահը (1945-1967 թթ.): Ինդոնեզիայի ազգային կուսակցության հիմնադիրներից մեկը:

67 Илья Полонский, «Резня миллиона: боевой путь и страшная смерть компартии Индонезии», https://bit.ly/2yfHr2c, դիտվել է 08.06.2019.

68 Полонский, «Резня миллиона».

կոմունիստները սկսեցին վերապատրաստել առաջին երկու հազար զինյալներին[69]: Այս ամենը խորացրեց բանակի հակակրանքը ինդոնեզական կոմունիստների նկատմամբ: Առաջացած լարվածությանը հաջորդեցին սեպտեմբերի 30-ի իրադարձությունները, ինչն էլ սկիզբ հանդիսացավ ինդոնեզական կոմունիստների զանգվածային սպանությունների համար[70]:

1965 թ. սեպտեմբերի 30-ի գիշերը՝ լույս հոկտեմբերի 1-ը երիտասարդ կոմունիստական կազմակերպությունները փորձ կատարեցին ռազմական հեղաշրջում իրականացնել[71]: Նախագահական անվտանգության «Զակրաբիրավա» վաշտի զինծառայողները ներխուժեցին Հալիմ օդային բազա և սպանեցին վեց հրամանատարների, այդ թվում և Ինդոնեզիայի պաշտպանության նախարար Ահմադ Յանին[72]: Հոկտեմբերի 1-ի առավոտյան հեղափոխականներն անցան Ջակարտա, ինչից հետո փոխգնդապետ Ունտունգ Շամսուրին հայտարարեց, որ նախագահ Սուքարնոյի օգտին իրականացված հեղաշրջումը հաջողված է[73]: «Սեպտեմբերի 30-ի շարժման» հաջորդ քայլը գործող հրամանատարական անձնակազմի պաշտոնանկումներն էր, սակայն դա քիչ իրատեսական էր, քանզի գեներալ-մայոր Սուհարտոյին հաջողվեց վերահսկել իր ազդեցության տակ գտնվող բանակային զորամիավորումները և դադարեցնել հեղաշրջման հետագա ընթացքը: Ստեղծված իրավիճակում խիստ սահմանափակվեցին նախագահ Սուքարնոյի հնարավորությունները և նա ստիպված եղավ ինդոնեզական բանակի գլխավոր հրամանատարությունը հանձնել Սուհարտոյին[74]: Սրանից հետո ողջ Ինդոնեզիայի տարածքում սկսեցին Կոմունիստական կուսակցության անդամների, նրանց համակիրների և նույնիսկ ենթադրյալ կոմունիստների բռնաճնշումներ և զանգվածային սպանություններ: Հակակոմունիստական շարժմանն ակտիվ մասնակցում էին ինչպես ռազմական ուժերը, այնպես էլ աջակողմյանները և մի շարք իսլամիստական խմբավորումներ: Սակայն, հարկ է նշել, որ Կոմունիստական կուսակցության ամենամեծ հակառակորդը գլխավոր շտաբի ղեկավար Աբդուլ Հարիս Նասութիոնն[75] էր, ում նախաձեռնությամբ 1954 թ. ձևավորվեց «Ինդոնեզիայի անկախության աջակիցների լիգան» (IPKI)[76]: Իսկ ավելի ուշ, 1959 թ. Մակասարում[77] տեղի ունեցած ժողովի ժամանակ որոշում ընդունվեց լիգայի ներսում ստեղծել մի քանի մասնաճյուղեր և նույն թվականի հոկտեմբերի 28-ին կազմավորվեց «Ինդոնեզիայի անկախության աջակիցների լիգա»-ի (այսուհետ՝ ԻԱԱԼ)

---

69 Նույն տեղում:

70 Զոհերի թիվը տատանվում է 500.000-ից մինչև 3 միլիոնի:

71 Նույն տեղում:

72 Նույն տեղում: Տե՛ս նաև «1965 год. Бойня в Индонезии», https://bit.ly/30Vo4rK, դիտվել է 07.06.2019:

73 Полонский, «Резня миллиона».

74 Նույն տեղում: Տե՛ս նաև «1965 год»:

75 Ինդոնեզիայի ազգային հերոս, ռազմական գործիչ, գեներալ: Եղել է Ինդոնեզիայի ազգային բանակի գլխավոր հրամանատար (1955-1959, 1962-1965 թթ.):

76 Ucok Mayestic, "Pemuda Pancasila," https://bit.ly/2Y5Ml1o, դիտվել է 06.06.2019:

77 Ինդոնեզիայի Հարավային Սուալես նահանգի մայրաքաղաքը:

երիտասարդական թևը[78]: Այս որոշումը 1959 թ. հուլիսի 5-ին նախագահ Սուքարնոյի հռչակած հրամանագրի տրամաբանական շարունակությունն էր[79]: Երիտասարդական օղակը ստացավ «Հայրենասեր երիտասարդություն» (Pemuda Patriotik)[80] անվանումը: Սակայն կառույցն այս անունով երկար չգործեց: 1960 թ. ԻԱԱԼ-ի հերթական ժողովներից մեկի ժամանակ ինդոնեզական բանակի հատուկջոկատայինների (RPKAD, Kopassus) ներխուժումից հետո կառույցը վերանվանվեց «Պանչասիլայի երիտասարդություն» (Pancasila Youth)[81]:

Կազմակերպության անունն առաջացել է Ինդոնեզիայի պետական պաշտոնական գաղափարախոսություն հռչակված «Հինգ սկզբունքներ» կոչված Pancasila բառից: Կառույցը հանդես է եկել որպես կիսապաշտոնական քաղաքական ավազակային խումբ և մեծ աջակցություն է ցուցաբերել Սուհարտոյին[82] 1965 թ. ռազմական հեղաշրջման, «Նոր կարգերի» հաստատման ժամանակ[83]:

«Պանչասիլայի երիտասարդություն» կազմակերպության անդամները «Հինգ սկզբունքներ»-ի հետևորդները և ջատագովներն էին, որոնք կառույցի կազմում ներգրավվելու համար երդմնակալություն էին իրականացնում. «Մեկ հող՝ Ինդոնեզիա: Մեկ ազգ՝ ինդոնեզական: Մեկ լեզու՝ ինդոնեզերեն: Մեկ գաղափարախոսություն՝ Պանչասիլա»[84]:

Հաշվի առնելով, որ անկախ Ինդոնեզիայի նոր գաղափարախոսության, «Նոր կարգերի» հաստատման համար Կոմունիստական կուսակցությունը խոչնդոտ էր հանդիսանում, ուստի կազմակերպությունն իր շուրջն էր համախմբել հակակոմունիստների: Կառույցի կորիզը կազմում էին սոցիալական ցածր խավի երիտասարդությունը՝ փողոցային հանցագործներ, որոնք պատրաստ էին ֆիզիկական բռնություն իրականացնել: Կազմակերպության սոցիալական հիմքին ավելի մանրամասն անդրադարձ կլինի երեք կառույցների գործունեության համեմատությունը ներկայացնելիս: Հարկ է միայն նշել, որ թեկուզև «Պանչասիլայի երիտասարդության» անդամներն այդպես էլ մնացին «թաղային հեղինակության» մակարդակում և երբեք չներգրավվեցին պետական վերնախավի շարքերում, այնուամենայնիվ նրանց դերը մինչ օրս կարևոր և նշանակալից է Ինդոնեզիայի ներքին քաղաքականության մեջ: Դրա մասին են փաստում իշխանությունների ներկայացուցիչների հայտարարությունները[85]:

---

78 Полонский, «Резня миллиона».

79 Loren Ryter, “Pemuda Pancasila: The Last Loyalist Free Men of Suharto’s Order?” *Indonesia*, no. 66 (1998): 44-73.

80 Полонский, «Резня миллиона».

81 Նույն տեղում:

82 Հաջի Մուհամմադ Սուհարտո, Ինդոնեզիայի ռազմական և պետական գործիչ: Եղել է Ինդոնեզիայի երկրորդ նախագահը (1968-1998 թթ.):

83 Mayestic, “Pemuda Pancasila.”

84 “Sejarah Pemuda Pancasila Sumut,” https://bit.ly/2SEhTFw, դիտվել է 07.06.2019.

85 Роман Шанга, «Сухарто – нашей юности полет», 23 октября 2017, https://bit.ly/2JRLUPh, դիտվել է 27.207.2019.

Ընդհանրացնելով «Թեշքիլաթը մահսուսա», «ԷսԷս» և «Պանչասիլայի երիտասարդություն» կազմակերպությունների կառուցվածքի, գործունեության հիմնական ուղղությունների մասին պատկերը, փորձ է արվելու համեմատականներ անցկացնել երեք կազմակերպությունների միջև՝ ընդգծելով դրանց ընդհանրությունները և առանձնահատկությունները: Հետազոտության առաջին հատվածում խնդիր էր դրվել վերհանել վերոնշյալ հատուկ կառույցների առաջացման կարևորությունը գործող իշխանությունների համար: Կառույցների գործունեության ուսումնասիրությունը ցույց է տալիս, թե ինչ նշանակություն և ինչ մասնակցություն են դրանք ունեցել ցեղասպանական և զանգվածային սպանությունների ծրագրերի իրականացման գործընթացում:

«Թեշքիլաթը մահսուսա»-ի, գերմանական «ԷսԷս»-ի և «Պանչասիլայի երիտասարդություն» կառույցների միջև համեմատականները բազմազան են, ուստի նպատակահարմար է առանձին-առանձին անդրադառնալ երեք կազմակերպությունների միջև առկա ընդհանրություններին և առանձնահատկություններին:

Կազմակերպությունների գործունեության ընդհանրությունները և առանձնահատկությունները

Պատկանելություն կուսակցական համակարգերին. կառույցների ձևավորման նպատակները. Հետազոտության առարկա կառույցները, չնայած իրենց կիսառազմական բնույթին, առաջացել են կուսակցական ապարատների ներսում՝ ղեկավարների նախաձեռնությամբ: «Թեշքիլաթը մահսուսա»-ն ստեղծվեց «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի որոշմամբ[86], երբ ժողովներից մեկի ժամանակ կուսակցության քարտուղար Բեհաէդդին Շաքիրը շեշտում է հատուկ կառույց ստեղծելու կարևորության մասին. «Ընկերնե՛ր, խիստ կարեւոր եւ ծանր պարտականութիւն մը ստանձնեցինք... Հիմա ամէն բանէ առաջ մեր տրամադրութեան անկախ զինեալ ուժի մը պէտք ունինք...»[87]: Սա փաստում է այն մասին, որ Հատուկ կազմակերպություն ստեղծելու հարցը քննարկվում էր հայերի բնաջնջման ծրագրի մշակման հետ զուգահեռ, ուստի Թեշքիլաթը-ի քաղաքացիական թևի գործունեության հիմնական նպատակը հենց Հայոց ցեղասպանության իրագործումն էր: Իր առջև ունենալով հայերի հարցը վերջնականապես լուծելու կարևորագույն խնդիրը՝ կազմակերպությունը կարողացավ կարճ ժամանակում համալրվել, ամրանալ և ցանկացած միջոցներով ի կատար ածել իթթիհատականների բաղձալի երազանքը:

Ինչ վերաբերում է գերմանական «ԷսԷս»-ին, ինչպես արդեն նշել ենք, այն ձևավորվեց Նացիոնալ-սոցիալիստական գերմանական բանվորական կուսակցության ղեկավար Ադոլֆ Հիտլերի (ղեկավարել է 1921-1945 թթ.) որոշմամբ[88]: Այլ կերպ ասած «ԷսԷս»-ը վերակազմավորված ՍԱ-ն (գրոհային ջոկատներ) էր, որը պարզապես նոր անուն ստացավ՝ «պահնորդական ջոկատներ»:

---

86 Авакян, *Геноцид армян,* 96-97.

87 Ռիֆաթ Մէվլան Զատէ, *Օսմանեան յեղափոխութեան մութ ծալքերը եւ իթթիհատի հայաջինջ ծրագիրները* (Երևան, ԿՓՀ Ֆաքսիմիլ հրատ., 1990), 113:

88 Хайнц, *Черный орден СС,* 22.

Վերոնշյալ երկու կառույցների նման, «Պանչասիլայի երիտասարդություն»-ը ևս ձևավորվել է կուսակցության շրջանակներում: Չնայած, պետք է շեշտենք, որ «Ինդոնեզիայի անկախության աջակիցների լիգա»-ն իրեն համարում և ներկայացնում էր ոչ թե որպես կուսակցություն, այլ ինքնաբուխ շարժում, որը հետագայում վերաճեց հզոր հեղափոխության[89]:

Այսպիսով, ամփոփելով կառույցների ձևավորման պատճառները և հանգամանքները, ընդգծենք դրանց հիմնական ընդհանրությունները և առանձնահատկությունները: «Թեշքիլաթը մահուսա»-ն և «Պանչասիլայի երիտասարդություն»-ը սկզբից մինչև վերջ տարան, համապատասխանաբար, Հայոց ցեղասպանության և Ինդոնեզիայի կոմունիստական կուսակցության անդամների կոտորածի ողջ ընթացքը և արդարացրեցին իրենցից ակնկալվող հույսերը: Իսկ «ԷսԷս»-ն ի սկզբանե նպատակ ուներ ապահովել ֆյուրերի և նացիստական կուսակցության անդամների անվտանգությունը և միայն հրեաների ոչնչացման ծրագրի հաստատումից հետո «ԷսԷս»-ի ստորաբաժանումները լծվեցին այդ «սրբազան հարցի» լուծմանը և մինչև վերջ տարան ընթացքը: Հակահրեական գործողություններին մասնակից են դարձել «ԷսԷս»-ի գրեթե բոլոր ստորաբաժանումները, որոնց առջև դրված խնդիրները ծառայել են մեկ ընդհանուր նպատակի:

Գաղափարախոսություն. Հաջորդ ընդհանրությունը, որ անմիջապես կապված է կուսակցական ապարատների և դրանց առաջնորդների հետ՝ կուսակցությունների որդեգրած գաղափարախոսությունն է, որին անվերապահորեն հավատարիմ էին ստեղծված կազմակերպությունները: Խոսքը պանթուրքիստական, նացիոնալ-սոցիալիստական և «Հինգ սկզբունքեր» գաղափարախոսությունների մասին է, որոնք սկիզբ առան Օսմանյան Թուրքիայի, Վայմարյան հանրապետության, Ինդոնեզիայի համար ծանր սոցիալ-տնտեսական, ինչպես նաև քաղաքական իրավիճակի պայմաններում: Իսկ արդեն իթթիհատականների, նացիստների և հակակոմունիստների իշխանության գալուց հետո այս գաղափարախոսություններն ավելի ամրապնդեցին իրենց դիրքերը և պաշտոնականացվեցին:

Գաղափարախոսություններն էլ իրենց հերթին ունեն ընդհանրություններ՝ երեք թևի գաղափարներն էլ հանգում էին ցեղասպանական գործողությունների կամ զանգվածային սպանությունների: Սա կարելի բացատրել պանթուրքիզմի և նացիոնալ-սոցիալիզմի հիմքում ընկած «միատարր էթնիկ կայսրություն» ստեղծելու նպատակով և պանչասիլայի գաղափարներից բխող փիլիսոփայական հիմքով: Իթթիհատականների պարագայում գլխավոր նպատակը «թուրք տարրի հզորացումն» էր, որին, ինչպես նշում է դոկտոր Նազըմը, կարելի է հասնել ցանկացած միջոցով. «Եթե անհրաժեշտ է, ձուլումը պետք է իրականացվի բռնի միջոցներով, և չպետք է խուսափել հասարակական կարծիքից…»[90]: 1911 թ. Սալոնիկում տեղի ունեցած երիտթուրքերի չորրորդ համա-

89 Ryter, “Pemuda Pancasila.”

90 Արսեն Ավագյան, «Պանթուրքիզմի գաղափարախոսության ընդունումը «Միություն և առաջադիմություն» կուսակցության երրորդ և չորրորդ համագումարներում», *Հայոց ցեղասպանություն: Պատճառներ և դասեր*, մաս 3 (Երևան, Ազգային հարցի և գենոցիդի ուսումնասիրման կենտրոն, 1995), 17:

գումարում ազգային քաղաքականության մասին որոշում ընդունվեց, որը հաստատում էր, որ՝ «Վաղ թե ուշ պետք է տեղի ունենա կայսրության բոլոր ժողովուրդների օսմանացումը և եթե այն հնարավոր չէ իրականացնել խաղաղ միջոցներով, չպետք է խուսափել բռնի, ընդհուպ մինչև ռազմական միջոցների կիրառումից...»[91]:

Ինչ վերաբերում է նացիոնալ-սոցիալիզմին, ապա այս պարագայում ևս գերնպատակը բնակչության լիարժեք գերմանականացումն էր: Այս դեպքում սահմաններն ավելի ընդարձակ էին՝ ծրագիրը բացի բուն Գերմանիայից ներառում էր նաև գրավված տարածքների մասեր:

Ինդոնեզական «Հինգ սկզբունքների» պարագայում մի փոքր այլ էր, քանի որ դրանք միտված էին ոչ թե միատարր ինդոնեզական ազգի ստեղծմանը, այլ «արդար և բարգավաճ» հասարակության ձևավորմանը[92]: «Հինգ սկզբունքները» հռչակվեցին դեռևս 1945 թ. հունիսի 1-ին, երբ Անկախության նախապատրաստման կոմիտեում (Independence Preparatory Committee) նախագահ Սուքարնոն հանդես եկավ «Պանչասիլայի ծնունդը» հայտնի ճառով[93]: Նախագահը «Պանչասիլան» ներկայացրեց որպես «Հիմնական պետություն» (“Dasar Negara,” Ինդոնեզական պետության քաղաքական փիլիսոփայություն), որի հիմքում հետևյալ հինգ սկզբունքներն էին.

Առաջին սկզբունքը՝ «Հավատը միակ բարձրագույն Աստծուն» (Sila Ketuhanan yang Maha Esa): Այս սկզբունքը ամրագրվել է 1945 թ. Սահմանադրության մեջ և կոչ է, որ «պետությունը պետք է հիմնված լինի միայն Աստծու հավատքի վրա»[94]: Ըստ արևմտյան տեսակետի՝ Ինդոնեզիան աշխարհիկ չէ, բայց այնուամենայնիվ, բարձրյալի հանդեպ հավատքը մնացել է որպես ընդհանուր համոզմունք տարբեր կրոնների՝ իսլամի, քրիստոնեության, հինդուիզմի և բուդդիզմի համար: Այս հզոր կրոնները պաշտոնապես ճանաչված են պետությունում և կրոնական վարչության կողմից[95]:

Երկրորդը «Արդար և քաղաքակիրթ մարդկության» (Sila Kemanusian yang Adil dan Beradab) սկզբունքն է, որը մարդկանց հանդեպ պահանջում է հարգալից վերաբերմունք, քանի որ մարդուն Աստված է արարել: Այն ընդգծում է, որ ինդոնեզացի ժողովուրդը չի հանդուրժում իր ժողովրդի կամ այլ ազգի կողմից մարդկանց ֆիզիկական կամ հոգևոր ճնշումը[96]:

Սկզբունքներից երրորդը՝ «Ինդոնեզիայի միասնություն» (Sila Persatuan Indonesia), ենթադրում է հավատարմություն Ինդոնեզիայի միասնության սրբազան գործին: Այս սկզբունքն արտահայտում է ազգայնականությունը՝ սեփական ազգի և հայրենիքի նկատմամբ սերը[97]: Քանի որ Ինդոնեզիան միավորում է 13.000 կղզիներ և 350 էթնիկ

---

91 Նույն տեղում, 18:

92 Michael Morfit, “Pancasila: The Indonesian State Ideology According to the New Order Government,” Asian Survey 21, no. 8 (1981): 838-851, 840-844.

93 “Pancasila,” Indonesia Christian Leadership Blog, https://bit.ly/2Y37OrD, դիտվել է 20.04.2019.

94 Նույն տեղում:

95 Morfit, 840:

96 Pancasila, Indonesia Christian Leadership Blog.

97 Նույն տեղում:

խմբեր[98], ուստի պետության միասնության կարևորությունը միանգամայն բնական և տրամաբանական է: Այդ միասնությունն արտահայտված է Ինդոնեզիայի զինանշանի վրա՝ «միասնություն բազմազանության մեջ», որին դեռևս 1928 թ.-ից ձգտում էր հասնել Ինդոնեզիայի երիտասարդությունը[99]:

Հաջորդ սկզբունքը, թեև ոչ բառացի թարգմանությամբ, կոչ է անում ժողովրդավարության, որի հիմքում ընկած է միասնությունը: Իսկ դրան հնարավոր է հասնել քննարկումների, համաձայնության, երկխոսության շնորհիվ՝ «Երկխոսության ժողովրդավարություն» (Kerakyatan yang Dipimpin oleh Hikmat Kebijaksanaan dalam Permusyawaratan/ Perwakilan)[100]:

Վերջին սկզբունքը պահանջում է «Սոցիալական արդարություն Ինդոնեզիայի ողջ ժողովրդի համար» (Keadilan Sosial bagi Seluruh Rakyat Indonesia): Սա ենթադրում է, որ պետության բոլոր միջոցները և ազգային պոտենցիալը պետք է առավելագույնս ծառայեցվի ժողովրդի բարեկեցության և բարգավաճման համար:

Այսպիսով, Թուրքիան թրքացնելու, Գերմանիան՝ իր հարակից գրավված տարածքներով գերմանականացնելու և Ինդոնեզիան որպես անկախ, արդար, զարգացած պետություն ստեղծելու գաղափարները կլանել էին ողջ համակարգը: Իսկ հատուկ կազմակերպությունները՝ «Թեշքիլաթը մահսուսա»-ն, «ԷսԷս»-ը և «Պանչասիլայի երիտասարդություն»-ն այդ համակարգի նվիրյալներն էին և որդեգրած գաղափարախոսությունների հետևորդները:

Կազմակերպությունների գործունեությունը մինչ ցեղասպանությունը և մինչ զանգվածային սպանությունները. Կազմակերպությունների միջև համեմատության առարկա է նաև նրանց՝ մինչև հայերի և հրեաների բնաջնջումը, ինչպես նաև կոմունիստների սպանություններն իրականացրած գործունեությունը: Այս առումով, զուգահեռ կարող ենք անցկացնել «Թեշքիլաթը մահսուսա»-ի և «ԷսԷս»-ի միջև: Գաղտնիք չէ, որ դեռևս «ֆիդայիների կազմակերպության» անդամներն իրականացնում էին ահաբեկչական գործողություններ քաղաքական ընդդիմադիր գործիչների դեմ: «Ֆիդայիների» ձեռնարկների շարքում էին 1909 թ. ապրիլից մինչև 1911 թ. հուլիսը կենտրոնական կոմիտեի որոշմամբ իրականացված ընդդիմադիր խմբագիրներ Հասան Ֆեհմի, Ահմեդ Սամիմի և Զեքքիի սպանությունները[101]: Որոշ փաստաթղթերով նրանց է վերագրվում նաև «Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամ, Ադանայի՝ 1909 թ. ապրիլի իրադարձությունների հետաքննիչ հանձնաժողովի ներկայացուցիչ Հակոբ Պապիկյանի վաղաժամ մահը[102]:

Նույնպիսի գործունեություն իրականացրել են նաև «ԷսԷս»-ի մարտիկները: Դրանցից ամենահայտնին Էռնստ Ռյոմի դեմ իրականացված «Երկար դանակների գիշեր» կամ «Ռյոմի մաքրում» գործողությունն էր: Սակայն «ԷսԷս»-ի ահաբեկչական

98 Morfit, “Pancasila,” 840:

99 “Pancasila.”

100 Նույն տեղում:

101 Авакян, *Геноцид армян*, 97.

102 Նույն տեղում, 97-98:

գործողությունները չսահմանափակվեցին միայն ներքին «թշնամիների» շրջանում:

Ինչ վերաբերում է «Պանչասիլյայի երիտասարդությանը», ապա այն ձևավորվեց որպես Ինդոնեզիայի անկախության համար ճանապարհ հարթող գործիք, որը լիարժեք կենտրոնացավ, այսպես կոչված Ինդոնեզիայի անկախությանը սպառնացող համակարգի և դրան աջակցող կոմունիստական կուսակցության դեմ: Այս կազմակերպությունն իր շուրջն էր համախմբել հակակոմունիստների, ուստի դրա նպատակը հենց սկզբից էլ մեկն էր՝ Ինդոնեզիայի կոմունիստական կուսակցության տապալումը: Կարող ենք ասել, որ ի տարբերություն դիտարկվող մյուս երկու կառույցների, «Պանչասիլայի երիտասարդությունը» չի իրականացրել մինչցեղասպանական գործողություններ և ձևավորման սկզբից էլ նվիրվել է կոմունիստների բնաջնջման նպատակին:

Հանցագործ խավի ներգրավում. Կազմակերպությունների գործունեությունն ակտիվացնելու և նրանց առջև դրված խնդիրներն արդյունավետ լուծելու համար, բնականաբար ի հայտ եկավ նրանց անդամների քանակն ավելացնելու հարցը: Հատկանշական է, որ «Թեշքիլաթը մահսուսա»-ն և «ԷսԷս»-ը դիմեցին նույն միջոցին՝ բանտերից ազատ արձակված հանցագործներին: «... իթթիհատական պարագլուխները փութով պատրաստեցին ջարդի եւ կողոպուտի մասնավոր մեքենականութիւնը: Անոնք բանտերէն եւ զնտաններէն ազատ արձակեցին բոլոր մարդասպանները, հանցագործները, գողերն ու ավազակները, եւ հայ ժողովուրդէն իսկ գանձուած դրամով զինելէ ետք, մարզեցին եւ պատրաստեցին զանոնք՝ «մասնավոր առաքելության» մը համար...»[103]: Ըստ «Նյու-Յորք թայմս»-ի 1915 թ. սեպտեմբերի 29-ի համարում զետեղված տվյալների՝ բանտերից ազատվել էին 3.000 հանցագործ մահմեդականներ, որոնցից կազմվել էին ավազակախմբեր. «Նրանց պարտականություններից էր գյուղերի թալանը, գողությունն ու մարդասպանությունը»[104]:

Նացիստներն իրենց ծրագրերն իրականացնելիս ևս օգտագործել են բանտերից ազատ արձակված հանցագործների: Բայցևայնպես, պետք է հաշվի առնել մի կարևոր առանձնահատկություն «ԷսԷս»-ի պարագայում: «ԷսԷս»-ին անդամագրվելու համար նախատեսված էին բավական բարձր պահանջներ՝ արիական ծագում, տարիքային, արտաքին, ֆիզիկական տվյալներ, ինչպես նաև «գերմարդու»՝ նացիստական պատկերացումներին համապատասխան թեկնածուներ և մասնագիտական երաշխավորագրեր[105]: «ԷսԷս»-ի կազմում կարող էին լինել բացառապես նրանք, ովքեր ունեին հետևյալ հատկանիշները՝ 1. էսէս-ի զորակոչիկների ֆիզիկական պատրաստվածության մակարդակը պետք է հավասար լիներ բանակային ստորաբաժանումների համար պահանջվող մակարդակին: 2. «արիական ծագում» և ֆաշիստական համոզմունքներ; գերմանացի նախնիների տոհմածառը պետք է հայտնի լիներ 1750 թվականից; «ռասայի մաքրությունը» սահմանվում էր ռասայական հանձնաժո-

---

103 Գերսամ Ահարոնեան, *Մեծ երազի ճամբուն վրայ* (Ակնարկ Հայկական հարցի պատմության վրայ), Բ. Տպագրություն (Պէյրութ, տպ. Ատլաս, 1964), 4:

104 Ստեփան Պողոսյան, Կարո Պողոսյան, *Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմություն, Հայկական հարցը 1908-14 թվերին*, հատոր II, գիրք I (Երևան, Հայաստան, 2001), 454:

105 Хайнц, *Черный орден СС,* 23; Нюрнбергский процесс, том 2, 846:

ղովի և եվգենիկական փորձարկումների միջոցով: 3. ոչ պակաս, քան 1 մետր 70 սանտիմետր հասակ: 4. նախապատվությունը տրվում էր «Հիտլերական երիտասարդություն» միության և ֆաշիստական կուսակցության անդամներին, որոնք կազմում էին «ԷսԷս»-ի զորքերի հիմնական մասը: 5. մինչև վեց ամիս փորձաշրջան, ինչը հնարավորություն էր տալիս շտկել թերությունները[106]:

Ինչ վերաբերում է «Պանչասիլայի երիտասարդությանը», ապա դրա հիմքում ամբողջապես հանցագործ խավն էր: Սակայն այս դեպքում նրանք ոչ թե բանտերից ազատ արձակված հանցագործներ էին, այլ սոցիալական ցածր շերտի, փողոցային հանցագործ խմբեր, որոնք մեծ աջակցություն ունեին իշխանությունների կողմից. «Նրանք ավազակներ են, բայց ավազակներ՝ ոչ թե որպես վատ մարդիկ, այլ որպես ազատ մարդիկ», - այսպես է արտահայտվել կառույցի անդամների մասին Ինդոնեզիայի վարչապետ Յուսուֆ Կալլան[107]: Իսկ մեկ այլ առիթով Հյուսիսային Սումատրայի նախկին նահանգապետ Սյամսուլ Արիֆինն ասել է. «Ավազակները կարող են քաոս տարածել և կարող են խաղաղություն ստեղծել: Հանցագործների օգնությունն անհրաժեշտ էր երկրին»[108]:

«Պանչասիլայի երիտասարդության» ամենահայտնի և կարկառուն ներկայացուցիչը, ով, կարելի է ասել, կառույցի հանցավոր դիմագծի հավաքական կերպարն է՝ Անվար Կոնգոն էր: Կոնգոն երիտասարդ ավազակախմբի առաջնորդներից էր, հայտի էր «Դաշույն» մականվամբ[109]: Նա ղեկավարում էր Մեդանի կինոթատրոնի վերահսկողությունն իրականացնող նույնանուն «Դաշույն» խմբավորումը: Անվարը շատ էր սիրում կինոն, հատկապես հոլիվուդյան ֆիլմերը: 1960-ականների սկզբներին կոմունիստները խստացրեցին գրաքննությունը, այդ թվում և կինոասպարեզում, ինչի արդյունքում Կոնգոյի սիրելի ամերիկյան ֆիլմերի ցուցադրությունն արգելվեց: Սա, գուցե և ոչ էական, սակայն Անվարի կողմից կոմունիստների նկատմամբ ունեցած անձնական լարվածության պատճառներից մեկն էր: Առհասարակ, հանցավոր խմբերը, որոնք ձևավորեցին «Պանչասիլայի երիտասարդություն» կազմակերպությունն՝ ընդգծված հակակրանք էին տածում կոմունիստների նկատմամբ, որոնք սահմանափակում էին ավազակախմբերի վերահսկողության բոլոր ոլորտները՝ նավահանգիստների մաքսանենգությունը, բիզնեսների հսկողությունը, դրամաշորթությունը, անօրինական բարերի և խաղատների գործունեությունը: Բայցևայնպես, պետք է նշել, որ հակակոմունիստական ալիքն ուներ ավելի խորը արմատներ և ուղղորդվում էր հակաիշխանական, մասնավորապես բանակային ուժերի կողմից, իսկ «Պանչասիլայի երիտասարդություն»-ն այդ քաղաքականության իրականացման գլխավոր գործիքն էր:

Եթե փորձենք ամփոփ բացատրել հանցագործ տարրի ներգրավվումը նմանատիպ կազմակերպությունների շարքերում, ապա դա միանշանակ կմեկնաբանվի որպես թույլ օղակ, որն առավել հեշտությամբ և փորձառությամբ է իրականացնում սպանություն,

106 Войска СС, 13:

107 Шанга, «Сухарто – нашей юности полет».

108 Նույն տեղում:

109 Նույն տեղում:

առավել ևս իր շահի՝ այս դեպքում բանտից ազատ արձակվելու կամ անարգել գործելու հնարավորության դիմաց:

Բանակի աջակցությունը հատուկ կազմակերպություններին. Հաջորդ ընդհանրությունն այն է, որ նշված կազմակերպություններին մեծ աջակցություն են ցուցաբերել բանակային ուժերը: Բանակն ակտիվ համագործակցում էր «Թեշքիլաթը մահուսա»-ի հետ: Թաներ Աքչամն իր ուսումնասիրություններից մեկում նշում է, որ «Թեշքիլաթը»-ի կազմում ընդգրկված էին բանտերից ազատ արձակված ոճրագործներ, Բալկաններից և Կովկասից եկած փախստականներ[110]: Ըստ նրա՝ «Հատուկ կազմակերպության (Թեշքիլյաթի) ամենակարևոր պարտականությունը «Տեղահանության մասին օրենքի» կիրառումն էր, ավելի ճիշտ՝ ակտիվ մասնակցությունը հայերի բնաջնջմանը»[111]: Աքչամը նշում է, որ այս նպատակին հասնելու համար նրանք նախապատրաստվում էին ռազմական նախարարության հսկողությամբ[112]: Բացի այդ, հայտնի է, որ «Թեշքիլաթը»-ի հրոսակախմբերին ուղեկցում էին բանակի սպաները, ինչի մասին փաստում է Բեհաէդդին Շաքիրի կնոջն ուղարկված նամակը, որտեղ ասվում է, որ Հատուկ կազմակերպության անդամների մի մասը տեղական զինված ուժերից են, որոնք փաստացի ներկայացվում են որպես «ներքին պահակախումբ», սակայն իրականում Հատուկ կազմակերպության ավազակախմբերից են[113]:

«ԷսԷս»-ի պարագայում ևս մեծ է եղել բանակի հետ համագործակցությունը: Շատ դեպքերում նույնիսկ բանակի գեներալները ստանձնել են «ԷսԷս»-ի հատուկ ուժերի հրամանատարությունը: Այսպես, 1941 թ. հոկտեմբերից «ԷսԷս»-ի հեծելազորային ջոկատը եղել է բանակի հրամանատարության ներքո և մասնակցել է Մոսկվայից 200 կմ հեռավորության վրա գտնվող Ռժև և Վելիկիե Լյուկի բնակավայրերի միջև «խաղաղություն հաստատելու» գործողություններին[114]:

Մի փոքր այլ պատկեր է «Պանչասիլայի երիտասարդության» պարագայում, քանի որ այս դեպքում բանակը ոչ թե աջակցում էր այս կազմակերպությանը, այլ, ինչպես արդեն նշել ենք, կառույցը ստեղծվել էր հենց բանակի հրամանատարության կողմից: Առհասարակ, Ինդոնեզիայի կոմունիստական կուսակցության ցեղասպանությունը ծրագրվեց և իրականացվեց ինդոնեզական զինված ուժերի կողմից, որի նպատակը պետական իշխանության զավթումն էր[115]: Բնական է, որ այսպիսի լայնամասշտաբ գործողությունը հնարավոր չէր իրականացնել առանց պլանավորման

---

110 Թաներ Աքչամ, «Թուրքական ազգային ինքնությունը և հայկական հարցը», *Բնօրրան* (Երևան) թիվ 1 (բացառիկ), 1995, 99:

111 Նույն տեղում:

112 Նույն տեղում:

113 Vahakn Dadrian, *The Role of the Special Organization in the Armenian Genocide during the First World War* (Oxford and Providence: Berg Publishers, 1993), 15.

114 Մաթոսյան, *Հայոց ցեղասպանություն և Հրեական հոլոքոստ*, 109:

115 Jess Melvin, "The Road to Genocide: Indonesian Military Planning to Seize State Power Prior to 1 October 1965," in *The Indonesian Genocide of 1965: Causes, Dynamics and Legacies* (ed. Katharine McGregor, Jess Melvin, Annie Pohlman), Series: Palgrave Studies in the History of Genocide (Palgrave Macmillan, 2018), 51-52.

և համակարգման, ինչպես նաև, ավելի կենտրոնացված ուժի կիրառման, որն այս դեպքում «Պանչասիլայի երիտասարդություն»-ն էր: Հարկ է նշել, որ այս կառույցի անդամները վերապատրաստվում էին բանակային ուժերի կողմից, ինչպես դա արվում էր «Թեշքիլաթը մահսուսա»-ի պարագայում:

Ստացվում է, որ բոլոր դեպքերում էլ գործում էր մեկ ամբողջական համակարգ, որն իր ուժերը մոբիլիզացնելու և իր առջև դրված նպատակին հասնելու համար կլանում էր հնարավոր օղակները:

Ամփոփելով կարելի է նշել, որ հետազոտության առարկա կազմակերպությունները ստեղծվել են համապատասխանաբար Օսմանյան կայսրության և նացիստական Գերմանիայի գործող իշխանությունների, իսկ մյուս դեպքում՝ հակաիշխանական ուժի կողմից և անմիջականորեն պատկանել են կուսակցական համակարգերին: Սրանք այն կազմակերպություններն էին, որոնց ներուժն առավելագույնս օգտագործվեց հայերի, հրեաների, ինդոնեզական կոմունիստների բնաջնջման ծրագրի իրականացման համար: Ուսումնասիրության առարկա կառույցներն իրենց շարքերը համալրել են հանցագործ տարրի օգնությամբ: Սակայն, պետք է նշել մի տարբերություն, որ ԷսԷս-ին անդամագրվելու համար ամրագրված էին հստակ և բավական բարձր չափորոշիչներ, որոնք հանցագործների պարագայում, վստահաբար չէին գործում: Կառույցների գործունեությունը թերի կլիներ՝ առանց բանակային ուժերի աջակցության:

Ի վերջո պետք է նշել, որ հենց «Թեշքիլաթը մահսուսա»-ի, «ԷսԷս»-ի և «Պանչասիլայի երիտասարդության» միջոցով է հնարավոր դարձել հայերի և հրեա ժողովուրդների ցեղասպանությունը, ինչպես նաև ինդոնեզական կոմունիստների զանգվածային սպանությունների իրագործումը:

Inessa G. Stepanyan

COMPARATIVE ANALYSIS ATTEMPT OF ACTIONS OF ORGANIZATIONS "TEŞKILATI MAHSUSA," "SS" AND "PANCASILA YOUTH"

SUMMARY

Key words: Armenian Genocide, Jewish Holocaust, mass killings of Indonesian Communists "Teşkilati Mahsusa," German "SS," the party system, ideology, pre-genocidal activity, army.

This article is an attempt to comparatively analyse the actions of "Teşhkilat-i Mahsusa," the German "SS" and the Indonesian organization "Pancasila Youth," which became the tool of implementation of the Armenian Genocide, the Jewish Holocaust and the mass killings of members of the Communist Party of Indonesia.

The article presents the history of formation and the structure of these organizations and also discusses the circumstances and goals of their formation, their ideology and activities before the genocide of Armenians, Jews and mass killings of the Indonesian communists.

The article also refers to the study of the acts by comparing the applied mechanisms of these structures.

The study attests the role of these structures in the process of the Armenian Genocide, the Jewish Holocaust and the mass killings of the members of the Indonesian Communist Party.

Инесса Г. Степанян

ПОПЫТКА СРАВНИТЕЛЬНОГО АНАЛИЗА ДЕЯТЕЛЬНОСТИ ОРГАНИЗАЦИЙ «ТЕШКИЛАТ-И МАХСУСА», «СС» И «МОЛОДЕЖЬ ПАНЧАСИЛА»

РЕЗЮМЕ

Ключевые слова: Геноцид армян, Холокост евреев, массовая резня индонезийских Коммунистов, «Тешкилат-и-Махсуса», немецкий «СС», «Молодежь Панчасила», партийная структура, идеология, предгеноцидальная деятельность, армия.

В статье представлен сравнительный анализ деятельности младотурецкой партии «Тешкилат-и-Махсуса», немецкого военизированного формирования «СС» и индонезийской организации «Молодежь Панчасила», которые стали орудием осуществления соответственно Геноцида армян, Холокоста евреев и массовой резни членов Коммунистической партии Индонезии.

В статье представлены история создания и структура каждой из организаций, рассматриваются обстоятельства и цели их формирования, их идеология, деятельность, предшествующая геноциду армян, евреев и массовой резни индонезийских коммунистов. Далее в статье исследованы действия данных структур, сравниваются применяемые ими механизмы и методы.

REFERENCES

«1965 год. Бойня в Индонезии…» [1965. Slaughter in Indonesia…]. https://sandinist.livejournal.com/205738.html;

Akçam, T'aner. «Թուրքական ազգային ինքնությունը և հայկական հարցը» [The Turkish National Identity and the Armenian Question]. *Bnórran*, no. 1, 1995;

Aharonyan, Gersam. Մեծ երազի ճամբուն վրայ [On the Way to a Big Dream]. Beirut: Atlas, 1964;

Avagyan, Arsen. «Պանթուրքիզմի գաղափարախոսության ընդունումը «Միություն և առաջադիմություն» կուսակցության երրորդ և չորրորդ համագումարներում», *Հայոց ցեղասպանություն: Պատճառներ և դասեր*, մաս 3 [“Adoption of the Ideology of Pan-Turkism in the Third and Fourth Congresses of the Union and Progress Party,” in *Armenian Genocide: Causes and Lessons*, Part 3], Yerevan: AGMI, 1995, 5-20;

Avagyan, Arsen. *Геноцид армян: механизмы принятия и исполнения решений* [The Armenian Genocide: the Mechanisms of Decision-making and Implementation]. Yerevan: AGMI, 2013;

Chuev, Sergeï. *Спецслужбы третьего рейха: Книга вторая* [Secret Services of the Third Reich. Second Book]. *Saint Petersburg:* Neva, 2003;

Dadrian, Vaakn. *История армянского геноцида: этнический конфликт от Балкан до Анатолии и Кавказа* [The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia and the Caucasus]. Yerevan: Noyan-Tapan, 2007;

Ezhov, P. V., ed., *Войска СС фашистской Германии* [SS Troops of the Fascist Germany]. Moscow, 1944;

Frank, Anne. Աննա Ֆրանկի օրագիրը [The Diary of Anne Frank]. Yerevan: Haypethrat, 1962;

Gorshenin, Konstantin, Rudenko, Roman, i Nikitchenko, Iona (eds.). *Нюрнбергский процесс. Сборник материалов. Том 2* [The Nuremberg Process. Collection of Materials, Vol II]. Moscow: Gosudarstvennoye izdatel'stvo iuridicheskoï literatury, 1954;

Il'ichev. B. I. «Коммунистическая партия Индонезии», *Большая Советская Энциклопедия*, [Communist party of Indonesia. A reprint from The *Great Soviet Encyclopedia*]. https://oval.ru/enc/35567.html;

Khaïnts, Khene. *Черный орден СС. История охранных отрядов* [Black Order of the SS: the History of Security Detachments]. Moscow: Olma-Press, 2003;

Kirakosyan, John. *Երիտթուրքերը պատմության դատապարտանի առաջ* [The Young Turks before the Judgment of History].Yerevan: Hayastan, 1983;

Mat'osyan Tigran, *Հայոց ցեղասպանություն և Հրեական հոլոքոստ. համեմատման փորձ* [The Armenian Genocide and the Jewish Holocaust: an Attempt of Comparison]. Yerevan: AGMI, 2005;

Melvin Jess, "The Road to Genocide: Indonesian Military Planning to Seize State Power Prior to 1 October 1965," in *The Indonesian Genocide of 1965: Causes, Dynamics and Legacies* (ed. Katharine McGregor, Jess Melvin, Annie Pohlman), Series: Palgrave Studies in the History of Genocide (Palgrave Macmillan, 2018), 51-69;

P'ap'azyan, Avetis, ed., Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի [The Armenian Genocide according to the Documents of the Young Turk Trials]. Yerevan: HSSH GA, 1988.

Poghosyan, Step'an, Poghosyan, Karo. *Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմություն. Հայկական հարցը 1908-14 թվերին* [History of the Armenian Question and the Armenian Genocide: the Armenian Question in 1908-14. Vol. II, Book I]. Yerevan: Hayastan, 2011;

Polonskiï, Il'ia. «Резня миллиона: боевой путь и страшная смерть компартии Индонезии» [Massacre of a Million: the Battle Way and the Terrible Death of the Communist Party of Indonesia]. https://bit.ly/2yfHr2c;

Rifat', Mévlan Zaté. *Օսմանեան յեղափոխութեան մութ ծալքերը եւ իթթիհատի հայաջինջ*

ծրագիրները [The Dark Folds of the Ottoman Revolution and Ittihad's Program of Annihilation of Armenians]. Yerevan: KP'H Faqsimal, 1990;

Sahakyan, Vera. ««Թեշքիլաթ-ը մախսուսա» գաղտնի կազմակերպությունը՝ Հայոց ցեղասպանության ոճրագործ» [The Secret Organization "Teşhkilat-i Mahsusa" – The perpetrator of the Armenian Genocide]. *Vanadzori petakan hamalsarani gitakan teghekagir* 1 (2017);

Shanga, Roman. «Сухарто-нашей юности полет» [Suharto – Our Youth Flight]. http://vkrizis.ru/analiz/suharto-nashey-yunosti-polyot/;

Step'anyan, Inessa. «Հայոց ցեղասպանության և Հրեից հոլոքոստի հիմնական իրագործողների հարցի շուրջ» [On the Issue of the Main Perpetrators of the Armenian Genocide and the Jewish Holocaust]. *Ts'eghaspanagitakan handes* 6 no. 2 (2018): 69-87;

СС в действии. Документы о преступлениях СС [SS in Action: Documents on SS Crimes]. Moscow: Svetoton, 2000.